

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ – 2020 թ.
/ տևողությունը – 120 րոպե/

11 - 12 – րդ դասարաններ

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

- 1. Բարեխառն ծովային կլիման բնորոշ է.**
 1. Պատագոնիայի արևելյան առափնյա շրջաններին,
 2. Ավստրալիայի ծայր հարավ-արևմտյան ափերին,
 3. Հյուսիսային Ամերիկայի բարեխառն գոտու արևմտյան և արևելյան ափերին,
 4. Եվրասիայի հարավ-արևելյան ափերին:

- 2. Կյանքի միջին տևողությունը առավելապես պայմանավորված չէ.**
 1. բարձր մահացությամբ,
 2. միգրացիայի ինտենսիվությամբ,
 3. բնակչության ցածր կենսամակարդակով,
 4. բուժսպասարկման մակարդակով:

- 3. Ո՞ր ուղղությամբ են փչում պասսատները հարավային կիսագնդում.**
 1. հյուսիս – արևելքից հարավ – արևմուտք,
 2. հարավ – արևմուտքից հյուսիս – արևելք,
 3. հարավ – արևելքից հյուսիս – արևմուտք,
 4. հյուսիս – արևմուտքից հարավ – արևելք:

- 4. Զբոսաշրջությամբ առավել զարգացած երկրներ են.**
 1. Թուրքիան և Իրաքը
 2. Ճապոնիան և Չինաստանը
 3. Իտալիան և Ֆրանսիան
 4. ԱՄՆ – ը և Կանադան

- 5. Արդյունաբերության ո՞ր ճյուղի տեղաբաշխման գործում մեծ է կոմբինացման դերը.**
 1. քիմիական արդյունաբերություն,
 2. վառելիքային արդյունաբերություն,
 3. շինանյութերի արդյունաբերություն,
 4. մեքենաշինություն:

- 6. Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**
 1. Եփրատը սկիզբ է առնում Բյուրակն լեռնազանգվածից,
 2. Վանը և Սևանը տեկտոնահրաբխային ծագման լճեր են,
 3. եզրային հրաբխային լեռնազանգվածներից են Արևելապոնտականը և Հայկական Պարը,
 4. տեղումների քանակն արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ աճում է:

- 7. Չինաստանին սահմանակից պետություններ չեն.**
 1. Թայլանդը և Բանգլադեշը
 2. Հնդկաստանը և Նեպալը
 3. Մոնղոլիան և Ղազախստանը
 4. Պակիստանը և Տաջիկստանը

- 8. Քաղաքի բնակչության թիվը 128 000 է, բնական աճի գործակիցը՝ 24 %: Մեկ տարվա ընթացքում քաղաք է եկել 5485 մարդ, մեկնել՝ 3780 մարդ: Քաղաքի բնակչության թիվը մեկ տարի հետո կկազմի.**
 1. 132 777 մարդ
 2. 131 072 մարդ
 3. 1 323 780 մարդ
 4. 1 325 485 մարդ

- 9. Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**
 1. ամենահզոր ջեկ-ը Վանաձորինն է
 2. առաջին ջեկ-ը կառուցվել է Հրազդանում
 3. Երևանի ջեկ-ի հզորությունը 550 հազ. կվտ է
 4. ջեկ-երի կառուցումը պայմանավորված էր ջրաէներգետիկ ռեսուրսների բացակայությամբ

10. Արեգակի ճառագայթների անկման անկյունը Քեյփթաուն քաղաքում (հվ. լ. 33°) մարտի 21-ին կեսօրին կազմում է.
1. 67° 2. $33^\circ 30'$ 3. 57° 4. $22^\circ 30'$
11. Էքսկլավ է.
1. Սվազիլենդը 2. Լեսոտոն 3. Սան Մարինոն 4. Այասկան
12. Հերցինյան ծայրավորությունը ո՞ր դարաշրջանում է տեղի ունեցել.
1. Պալեոզոյան 2. Մեզոզոյան 3. Կայնոզոյան 4. Պրոտերոզոյան
13. Վայոց ձորի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.
1. արևելքից սահմանակից է Արարատի մարզին
 2. Սյունիքի մարզի հետ կապված է Որոտանի լեռնանցքով
 3. տարածքում հայտնաբերվել են երկաթի հարուստ պաշարներ
 4. տարածքի բացարձակ բարձրությունների տարբերությունը փոքր է:
14. Ո՞ր պնդումն է սխալ.
1. ԱՄՆ – ում է ձևավորվել առաջին մեգալոպոլիսը,
 2. բնակչության տարածական տեղաշարժը մշտական կամ ժամանակավոր բնակության նպատակով կոչվում է միգրացիա,
 3. բնակչության միգրացիայի գլխավոր պատճառը քաղաքական է,
 4. քաղաքային ագլոմերացիաները և մեգալոպոլիսները խմբային տարաբնակեցման ձևեր են:
15. Բոլոր տեսակի կենդանի օրգանիզմների ժառանգական հատկանիշների և հակումների ամբողջությունը կոչվում է.
1. էկոհամակարգ 2. կենսացենոզ 3. գենոֆոնդ 4. ժառանգականություն

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Օդի բացարձակ խոնավությունը 18 գ/մ^3 է, իսկ այն հագեցնելու համար անհրաժեշտ խոնավությունը 30 գ/մ^3 : Որոշել օդի հարաբերական խոնավությունը (%):
17. Լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 400 մմ է, օդի ջերմաստիճանը -4°C , իսկ ստորին $+10^\circ \text{C}$ (հաշվարկը կատարել 5°C - ով): Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան ստորոտին (մմ):
18. Երկրի բնակչության թիվը $1\ 800\ 000$ է, իսկ մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը $54\ 000$ մարդ: Ո՞րքան է ծնելիության գործակիցը (%):
19. Երկրի երկաթուղային տրանսպորտով տարեկան փոխադրվում է 4 մլն տոննա բեռ, իսկ բեռնաշրջանառությունը կազմում է 960 մլն տ.կմ: Որքա՞ն է բեռների փոխադրման միջին հեռավորությունը (կմ):
20. Երկրում եզիպտացորենի ցանքատարածությունների մակերեսը $400\ 000$ հեկտար է, իսկ համախառն բերքը $16\ 000\ 000$ տոննա: Որքա՞ն է եզիպտացորենի միջին բերքատվությունը ցենտներ/ հեկտարով (գ/հա):